ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՎՍՏՐԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը՝** Արմեն Ղազարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.** ք. Վիեննա, Ավստրիայի **Դաշնային** Հանրապետություն, **2021թ. սեպտեմբերի 8-ից 11-ը**

4. **Հրավիրող կողմը.** Ավստրիայի ներգաղթի և ապաստանի հարցերով դաշնային գրասենյակ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի շրջանակում հայկական կողմի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ անձանց նույնականացնելու համար հարցազրույցներ անցկացնել:

6. **Քննարկված թեմաները.**

Այցի շրջանակում Ա. Ղազարյանը հանդիպել է Ավստրիայի ներգաղթի և ապաստանի հարցերով դաշնային գրասենյակի Դուբլինի և միջազգային հարաբերությունների բաժնի ղեկավար Պույա Խոշուրուրի հետ: Կողմերը քննարկել են Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի համատեքստում առաջացած մի շարք ընթացիկ աշխատանքային հարցեր ու հնարավոր արդյունավետ լուծումների տարբերակներ, անդրադարձ է եղել նաև ռեադմիսիոն համաձայնագրի շրջանակում Հայաստանի բարձր կատարողականին, ինչպես նաև ԵՄ-ի հետ վիզաների ազատականացման գործընթացի հնարավոր մեկնարկին:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Աշխատանքային այցի ընթացքում Ա. Ղազարյանը Վիեննայում հանդիպում է ունեցել Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄՔՄՄԿ) գլխամասային գրասենյակի Միգրացիոն երկխոսության և համագործակցության

տնօրեն Մարթայն Փլյումի և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ղեկավար Վիոլետա Վագների հետ:

Կողմերը քննարկել են երկկողմ համագործակցությունն ու դրա շարունակականության հնարավորությունը: Ա. Ղազարյանը բարձր է գնահատել ՄՔՄՄԿ-ի նախաձեռնությամբ 2018 թ-ից ՄԾ-ում գործող ԷՐԻՆ ծրագրի արդյունավետությունը, որի շրջանակում շուրջ 1000 վերադարձողներ ստացել են վերաինտեգրման աջակցություն: ՄԾ պետը ներկայացրել է նաև նույն ծրագրի շրջանակում իրականացվող նախաձեռնությունը, որով ՄԾ վերադարձի և վերաինտեգրման աշխատակիցների, ինչպես նաև ոլորտին առնչվող այլ մասնագետների համար նախատեսվում է անցկացնել կարողությունների զարգացման դասընթացների շարք:

Միջազգային կազմակերպության աջակցությամբ Հայաստանում իրականացվող արժեքավոր նախաձեռնությունների թվում է նաև 100-ից ավելի ապաստան հայցողների համար նախատեսվող նոր կացարանի շինարարությունը, ինչի կապակցությամբ ևս ՄԾ պետն իր գոհունակությունն է հայտնել գործընկերներին:

Մ. Փլյումի և Վ. Վագների հետ քննարկվել է ՄՔՄՄԿ-ի աջակցությամբ և ԵՄ-ի օժանդակությամբ Հայաստանում մեկնարկած IMPACT ծրագիրը, որի շրջանակում նախատեսվում է Հայաստան վերադարձող և աշխատանքային միգրանտներին և նրանց ընտանիքի անդամներին ֆինանսական աջակցություն ցուցաբերել 1+1 սկզբունքով՝ սեփական ձեռներեցությունը հիմնելու նպատակով, որով նրանց միջոցները կուղղվեն հայրենիքում հիմնվելուն, տեղական զարգացմանն ու աշխատատեղերի ստեղծմանը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը. Չկան

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

14.09.2021